

# ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ


Առաջադրանքների լուծման համար տրվում է **75** րոպե

**5-6**-րդ դասարաններ

- Յուրաքանչյուր առաջադրանքի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը:
- Չլուծված առաջադրանքի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում:
- Մրցույթի մասնակիցը կարող է վաստակել առավելագույնը 120 միավոր:
- Մրցույթի ավարտին առաջադրանքների թերթիկը մնում է մասնակցի մոտ:
- Մրցույթի մասնակիցներին ներկայացվող գլխավոր պահանջը առաջադրանքներն ինքնուրույն և ազնվորեն կատարելն է:


## 3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. Քնարիկը պատկերված տառաշարը կտրտեց և ստացված տառերով հավաքեց նկարում բերված պատկերների անվանումները: Ի՞նչ նոր պատկերի անվանում նա կարող է ստանալ մնացած տառերով:



- Ա. ձուկ    Բ. դդում    Գ. վարդ    Դ. արձան    Ե. արդուկ

2. Մեղվիկը հնարամտորեն թաքցրել է պատասխանը: Գտի՛ր այն:

**գրատախտակ - ազատ** = 


Ա. կիստար    Բ. խակ    Գ. ախտ    Դ. գրագետ    Ե. տախտակ

3. Տառը «ներդրվել» է տրված պատկերի մեջ: Ի՞նչ բառ է ստացվել:



- Ա. սպորտ    Բ. սրտիկ    Գ. սպիրտ    Դ. պարսատիկ    Ե. սեպ

4. Յուրաքանչյուր քայլում բառի մեջ փոխելով մեկ տառ՝ **կոլ** -ից ստացել են **յուլ**: Ո՞ր բառը պետք է գրել մեղվիկի փոխարեն:

կոլ → կող → քող →  → յուլ

Ա. գող    Բ. փող    Գ. քուն    Դ. քուղ    Ե. բուկ

5. *Կռահի՛ր դու, թե ինչու  
Չորս համարձակ օղաչու  
Ունեն Արամ մի եղբայր,  
Իսկ Արամը, ա յ քեզ բան,  
Չունի և ոչ մի եղբայր:*

- Ա. Օղաչուները գնացել են Ամերիկա:    Բ. Օղաչուները ծեր են:  
Գ. Օղաչուները ռազմական ուղղաթիռներ են վարում:  
Դ. Օղաչուներն Արամի քույրերն են:    Ե. Օղաչուներն անցել են թռչակի:
6. Հովհաննես Թումանյանի հեքիաթների նշված հերոսները իրենց նայեցին ամեն ինչ հակառակը ցույց տվող հայելու մեջ, և նրանցից մեկը տեսավ իր իրական դեմքը: Ո՞վ է նա:

- Ա. Անբան Հուռիս    Բ. Քաջ Նազարը    Գ. Մուտլիկ որսկանը  
Դ. Անխելը մարդը    Ե. Չախտրդ Փանոսը
7. Ամբողջացնել *առածը*. «Աշխատող խոփը \_\_\_\_\_»:
- Ա. բարակ կլինի    Բ. շեղ կլինի    Գ. չի ժանգոտի    Դ. չի կոտրվի    Ե. շուտ կկոտրվի

8. Գտիր Ներսես Շնորհալու հանելուկի պատասխանը:  
*Կա մի գմբեթ՝ բարձր ու լայն,  
Կանգնած անայուն ու անզերան,  
Մեջը կանթեղ պայծառ լույսով,  
Կախված ջահեր առանց պարան:*
- Ա. ձող    Բ. եկեղեցի    Գ. այուն    Դ. գետին    Ե. երկինք

9. Ի՞նչ է գրված **Ծ Ծ Ն Մ** նկարելուկով:  
Ա. ծիածանի նման    Բ. ծիածանի մոտ    Գ. ծանծաղ ծովափ  
Դ. ծածանում են    Ե. մեծանում են

10. Քանի՞ նոր բառ կստանաս, եթե փոխես **շխտակ** բառի առաջին տառը:  
Ա. մեկ    Բ. երկու    Գ. երեք    Դ. չորս    Ե. ոչ մի

## 4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11. Եթե ջնջես վանդակի այն տառերը, որոնք կրկնվում են հնգական անգամ, մնացած տառերով ի՞նչ բառ կստանաս:

ջ	ու	ի	կ	ծ
կ	ո	ջ	ս	տ
ս	ի	ծ	մ	կ
ջ	կ	ս	ծ	ջ
ի	ծ	կ	ի	ս
ս	ջ	ա	ծ	ի

- Ա. մածուն    Բ. մատուռ    Գ. մասուր    Դ. միջուկ    Ե. մական

12. Ո՞ր տառն ավելացնենք **թուխայ** գոյականի հոմանիշին, որ լույս տա:  
Ա. ք    Բ. լ    Գ. հ    Դ. գ    Ե. թ

13. Նախադասության բառերը գրվել են առանց բացատների, ապա նախադասությունը կտրատվել է պատահական տեղերից, և կտորները խառնվել են իրար: Ստացվել է հետևյալ պատկերը՝ **Ան համար մարդ այն կար վուան թի տեղ**: Ո՞րն էր այդ նախադասությունը:

- Ա. Վանում հարմար մարդ կար այդ տեղում:  
Բ. Այն մարդը, որ կարդաց սա, հարմար կլինի այդ գործին:  
Գ. Մարդու համար կարևորը Վանում տեղ ունենալն է:  
Դ. Անթիվ ու անհամար մարդ կար այնտեղ:  
Ե. Անհարմար բան ստացվեց այնտեղ. մարդը վրիպեց:

14. Բառերից մեկը չի ենթարկվում մի ընդհանուր հետաքրքիր օրինաչափության: Ո՞ր բառն է դա:

Ա. լամպ    Բ. խայծ    Գ. խորշ    Դ. հերկ    Ե. ծունկ

15. **Հանկարծ խոր թավուտից մի սուր ճիչ լսվեց:**

Պատասխանի տարբերակներից չորսը հնարամտորեն թաքնվել են բերված նախադասությունում: Ո՞րը չի թաքնվել:

Ա. կայծ    Բ. սուրճ    Գ. խորթ    Դ. միս    Ե. որթ

16. Գտի՛ր բերված տառային ծածկագրի ճիշտ լուծումը:

	ԽԻՆԴ		ԽԻՆԴ		ՕԻԾԱՂ
	+		+		+
Ա. 7764	Բ. 4506	Գ. 8693	Դ. 6471	Ե. 7582	
+	+	+	+	+	
<u>7764</u>	<u>4506</u>	<u>8693</u>	<u>6471</u>	<u>7582</u>	
15528	9012	17386	12942	15164	

17. Տարբերակներում բերված արտահայտություններից չորսը ենթարկվում են մի հետաքրքիր օրինաչափության: Ո՞ր տարբերակի արտահայտությունը չի ենթարկվում այդ օրինաչափությանը:

Ա. անձրևի տարափ    Բ. ոսկի ձեռքեր    Գ. քար լույթուն  
 Դ. արծաթ մագեր    Ե. ծով համբերություն

18. Բառերի ո՞ր եռյակը եթե լրացնենք քառակուսու մեջ, տողերով և սյուններով կկարդանք բառեր:

Ա. ծագ – սիգ – սար    Բ. սար – սագ – սան    Գ. գիր – գիծ – սար  
 Դ. սագ – ագի – գիծ    Ե. կար – կոր – կեր


19. Ո՞ր տառն ավելացնենք **աջ, մեկ, մատ, հաց, կակաչ, հակ** բառերի ներսում, որպեսզի բոլորով ստանանք նոր բառեր:

Ա. ք    Բ. դ    Գ. ր    Դ. ո    Ե. լ

20. Ո՞ր բառն է գաղտնագրված:

$1^1 10^2 10^3 8^1 2^2$

Ա. ծաղիկ    Բ. կեռաս    Գ. մեքենա    Դ. օրրան    Ե. մասուր

**5 միավոր գնահատվող առաջադրանքներ**

21. *Ականջները սուր են շատ,  
 Հայացք ունի՝ գույգ ճրագ,  
 Պտտվում է իր համար,  
 Քուն է մտնում շարունակ:*

Գտի՛ր հանելուկի մեջ հնարամտորեն «թաքնված» կենդանուն:

Ա. բու    Բ. գամփո    Գ. ոգնի    Դ. կատու    Ե. այծիկ

22. Գրատախտակին գրված էին **մեղմօրոր, կծկվել, ճամփորդել, մաղթանք, կրծել, հայթհայթել, կցկտուր, խոնարհել, ըմբշամարտիկ, դաշյուն, երփնավառ, երբեմն, բրդոտ,**

**բացարձակ, ակնթարթ, արցունք, արդուզարդ, բզկտել, արհավիրք, ընթերցել** բառերը: Գիտունիկը ջնջեց սխալ գրված բոլոր բառերը: Քանի՞ բառ ջնջեց նա:

Ա. երեք    Բ. չորս    Գ. հինգ    Դ. վեց    Ե. յոթ

23. Ո՞ր դարձվածքն է պատկերված նկարում:



Ա. մեծ էշը ախոռում թողնել  
 Բ. մեջք մեջքի տակ  
 Գ. մի թել քաշես, հազար կարկատան կթափվի  
 Դ. մեկի պոչը մյուսի տակին է  
 Ե. մի գլխով բարձր լինել

24. «Մարդը երգեց **սհագին**» նախադասության բառերի տեղերը չփոխելով՝ կարելի է նոր նախադասություն ստանալ այդ բառերի գրաշրջմամբ (բառի բոլոր տառերով այլ բառ կազմելով): Ո՞րը կլինի նոր նախադասությունը:

Ա. Դրամը դրեց գրպանը:    Բ. Դմակը գերեց անհագին:    Գ. Դրաման գրվեց հանգերով:  
 Դ. Մարդը տիրեց նահանգին:    Ե. Դրամը գերեց ագահին:

25. Ո՞ր տառն է թաքցրել մեղվիկը (տե՛ս նկարը):

Մ	Ա	Ս
Հ	Հ	Օ
Ս	Հ	Ն
Դ		Փ

Ա. Հ    Բ. Փ    Գ. Ս    Դ. Ա    Ե. Օ

26. «Մեր **ցուղացին հին գութանով հերկում էր Թերեքի ափի չոր սարալանջի իր հողակտորը**»: Այս նախադասության մեջ ամենաշատը քանի՞ թվական կարելի է «պեղել»:

Ա. 9    Բ. 4    Գ. 8    Դ. 5    Ե. 7

27. **Գ, Ո, Հ, Ա, Ը** տառերից ո՞րը կարող է երկար տարիներ մնալուց հետո դառնալ թվական:

Ա. Գ    Բ. Ո    Գ. Հ    Դ. Ա    Ե. Ը

28. Ի՞նչ բառ է գրված ~~Շ~~ **Յ** նկարելուկով:

Ա. անշուն    Բ. անշահավետ    Գ. անշահ    Դ. անուշ    Ե. անհայտ

29. Կարմիր Գլխարկին ծննդյան օրվա առթիվ ընկերները նվիրեցին խաղալիքներ, որոնց վրա գրված են **դ, ա, ն, դ, կ, բ, է, ր, ու, գ, ա** տառերը: Կարմիր Գլխարկը քանի՞ խաղալիք պետք է դնի կողք կողքի, որ ստանա հնարավոր ամենաերկար բառը:

Ա. 10    Բ. 9    Գ. 7    Դ. 5    Ե. 4

30. Ո՞րն է հետևյալ ժողովրդական հանելուկի պատասխանը.

*Մի սյուն ունես, մի գդակ,  
 Կեսն արևին, կեսը հողի տակ.  
 Դուրս մի՛ ելնի,  
 Գայլ կտանի:*

Ա. ոչխար    Բ. հյուղակ    Գ. գազար    Դ. արևածաղիկ    Ե. սունկ